



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Protection of Rights  
Without Borders NGO

Բարձրագույն դատական խորհրդի որոշումների  
ուսումնասիրություն

Երևան, 2019թ.

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24  
Հեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303  
Էլ. Փոստ՝ [info@prwb.am](mailto:info@prwb.am), Կայքէջ՝ [www.prwb.am](http://www.prwb.am)



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Ուսումնասիրությունը իրականացվել է 2019թ.-ին «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության աջակցությամբ:*

*Ուսումնասիրության բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության տեսակետների հետ:*

*Ուսումնասիրությունն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի իրավական փորձագետներ Հայկուհի Հարությունյանի, Արաքս Մելքոնյանի, Հասմիկ Հարությունյանի, Նինա Հակոբյանի կողմից:*



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մույն հետազոտությունն իրականացվել է՝ հիմնվելով Դատական ինքնակառավարման մարմինների գործառնությունների հիմնական ոլորտների բաժանման վրա, իրականացնելով ոլորտին առնչվող միջազգային չափանիշների ուսումնասիրություն, ինչը ներառել է Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից ընդունված բանաձևերի, դիրքորոշումների և կարծիքների, այդ թվում՝ Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի, Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի, Վենետիկյան Հանձնաժողովի և այլ մարմինների կողմից ընդունված փաստաթղթերի ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ոլորտին առնչվող վճիռները:

Մասնավորապես՝ Միջազգային չափանիշների համաձայն՝ դատական խորհուրդները պետք է ղեկավար դեր ունենան դատական իշխանության հետ կապված մի շարք ոլորտների հետ.

1. Դատական խորհրդի կազմավորում,
2. Դատավորների ընտրություն և նշանակում,
3. Դատավորների առաջխաղացում,
4. Դատավորների գնահատում,
5. Կարգապահություն և էթիկայի հարցեր,
6. Թափանցիկություն և հաշվետվողականություն,
7. Դատական իշխանության բյուջեի կազմում, կատարում և վերահսկողություն,
8. Դատարանների վարչարարություն և կառավարում,
9. Դատական իշխանության հեղինակության ապահովում,
10. Հանրային հաշվետվողականություն և վերահսկողություն<sup>1</sup>:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ նաև ԲԴԽ) գործունեության շրջանակներում ընդունված որոշումները՝ 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 28-ը ներառյալ:

Բարձրագույն դատական խորհրդի կայացրած որոշումների համապատասխանությունը միջազգային չափանիշներին առավել պարզ հասկանալու համար՝ հետազոտության մեջ դրանք դասակարգվել են՝ ըստ վերը նշված գործառնությունների: Այդ իսկ պատճառով հետազոտության մեջ կարող են տեղ գտնել քանակական անհամապատասխանություններ ըստ միջազգային չափանիշների և ըստ Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնական կայքում հրապարակված և վերջիններիս կողմից ընտրված դասակարգման սկզբունքի՝ որոշումների տարանջատման միջև:

<sup>1</sup> [Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries](#)



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Դատական օրենսգիրք, Օրենսգիրք) 18-րդ հոդվածի համաձայն 1-ին մասի՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքն է [www.court.am](http://www.court.am):

Նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանված է, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները ենթակա են հրապարակման նույն կարգով՝ ապանձնավորած:

Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորությունները ստանձնել է 2018 թվականի ապրիլի 9-ին: Հաշվի առնելով Օրենսգրքի վերոնշյալ դրույթները՝ մեր կողմից ուսումնասիրվել են ՀՀ ԲԴԽ ձևավորումից հետո պաշտոնական կայքում հրապարակված բոլոր որոշումները՝ սկսած 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև 2018 թվականի թվականի դեկտեմբերի 28-ը<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ ԲԴԽ կողմից 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 28-ը հրապարակվել է 188 որոշում:

ԲԴԽ պաշտոնական կայքում հրապարակված որոշումները դասակարգվել են հետևյալ կերպ.

Որոշման տեսակը	Որոշումների քանակը
Նորմատիվ որոշումներ	5
Ընթացիկ որոշումներ	173
Աշխատակարգային որոշումներ	10

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝

➤ ենթաօրենսդրական **նորմատիվ իրավական ակտը** Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտն է,

➤ **անհատական իրավական ակտը** նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձին կամ անձանց,

➤ **ներքին իրավական ակտը** նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց

<sup>2</sup> 2018 թվականի վերջին աշխատանքային օրը <http://www.irtek.am/views/calendarw.aspx>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:*

ԲԴԽ պաշտոնական կայքում, ըստ էության, առկա է որոշումների դասակարգում՝ ըստ 3 խմբերի, և թեև նորմատիվ որոշումները և դրանց ընդունումը Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից նախատեսված են Օրենքով, անհասկանալի է ԲԴԽ կողմից ընթացիկ և աշխատակարգային որոշումների տարբերակումը:

Որոշումների այս տեսակների սահմանումները տրված չեն ո՛չ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, ո՛չ Դատական օրենսգրքում, և ո՛չ էլ ենթաօրենսդրական որևէ ակտում: ԲԴԽ հրապարակումներում և որոշումներում նույնպես չենք տեսնում որոշումների այս տեսակների հասկացությունների սահմանումը կամ ներկայացումը, թե ինչու են ընդհանրապես ԲԴԽ կողմից առանձնացվել որոշումների այս տեսակները: *ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասը միայն նախատեսում է, որ Բարձրագույն դատական խորհուրդն իր քննարկման ենթակա հարցերի նախապատրաստման նպատակով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ:*

Բարձրագույն դատական խորհրդի հաստատած Աշխատակարգի համաձայն՝ Խորհուրդն ընդունում է նորմատիվ, ներքին, անհատական, արձանագրային և աշխատակարգային որոշումներ:

Արձանագրային որոշումներ են Խորհրդի գործունեության կազմակերպչական հարցերի վերաբերյալ որոշումները, եթե դրանք առանձին ակտի ձևով չեն ընդունվում:

Խորհուրդը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով իր լիազորություններն իրականացնելիս ընդունում է անհատական իրավական ակտեր և ներքին իրավական ակտեր, ինչպես նաև Դատական օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Խորհրդի ներքին իրավական ակտերը, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը և Խորհրդի որոշմամբ՝ արձանագրային որոշումները զետեղվում են դատական իշխանության պաշտոնական կայքում:

Խորհուրդն իր քննարկման ենթակա հարցերի նախապատրաստման նպատակով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով, որոնք կարգավորված չեն Աշխատակարգով, Դատական օրենսգրքով նախատեսված կարգով քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ բաց քվեարկությամբ ընդունում է աշխատակարգային որոշումներ<sup>3</sup>:

Միաժամանակ նշված որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ակտերից տեսակներին: Այսպես՝ ԲԴԽ կողմից հրապարակված **ընթացիկ** որոշումներով կարգավորվում են դատավորների լիազորությունները դադարած համարելու, դատավորներին պարզևատրելու, դատավորներին և դատարանների նախագահներին

<sup>3</sup> <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-13-%D5%88-24.pdf>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

թեկնածություններ առաջարկելու և վերջիններիս թեկնածությունները ՀՀ նախագահին ներկայացնելու, դատավորինների միջև գործերի բաշխման, ԲԴԽ անդամների և դատավորների գործուղման, պահուստային ֆոնդից գումարների հատկացման և այլ հարցեր:

Ընթացիկ որոշումներով են կարգավորվում նաև որակավորման գրավոր քննության ձևի, հարցերի մշակման կարգի, քննությունների կազմակերպման և անցկացման, գրավոր քննությունների ստուգման և գնահատման հանձնաժողովների կազմի ձևավորման, դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի անցկացման վայրը և ժամանակացույցը սահմանելու, դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի անցկացման համար հոգեբանական հարցեր մշակելու նպատակով հոգեբան ընտրելու, դատավորների գործունեության առաջին հերթական գնահատման ժամանակացույցը հաստատելու, որակավորման քննություններով մասնակցելու նպատակով ներկայացվող հայտին, հայտին կից ներկայացվող համաձայնության ձևին ներկայացվող պահանջների վերաբերյալ և այլ հարցեր:

Ընթացիկ որոշումներով կարգավորվում են նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված և ընդունման ենթակա իրավական ակտերի ընդունման, կատարման ենթակա գործողությունների ծրագրի հաստատման բյուջետային հայտի հաստատման, առաջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատման, դատավորներին արձակուրդ տրամադրելու կարգի կապված, կնիքների և դրոշմակնիքների նկարագրությունը և տրամադրման կարգը սահմանելու վերաբերյալ հարցեր:

Նույն ընթացիկ որոշումների տակ լուծվում են Դատական դեպարտամենտի կանոնադրության հաստատման, դեկավարի նշանակման, դատական կարգադրիչների պաշտոնի անձնագրերի, կրծքանշանների ձևի հաստատման, դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգի, դատավորների միջև գործերի բաշխման, վերաբաշխման և կոլեգիալ դատական կազմերի ձևավորման համակարգչային ծրագրի շահագործման կարգը սահմանելու, ինչպես նաև ԲԴԽ խորհրդանիշի հաստատման, ԲԴԽ պաշտոնական կայքի կառուցվածքի սահմանման, ԲԴԽ պաշտոնական կայքում հրապարակվող տեղեկությունների ապանձնավորման հետ կապված հարցեր:

Եթե առաջնորդվենք ԲԴԽ կողմից որոշումների տարանջատմամբ, ընթացիկ որոշումների բաժնում ներառված մի շարք հարցեր կապված են ԲԴԽ գործունեության կազմակերպման հետ և կարող էին կարգավորվել աշխատակարգային որոշումներով:

Նույն սկզբունքով շատ որոշումներ ունեն արտաքին ներգործություն և ուղղված են կոնկրետ անձանց, ուստի դրանք պետք է սահմանվեին որպես անհատական իրավական ակտ:

Հարց է առաջանում, թե ինչ նպատակով են առանձնացվել ընթացիկ որոշումները, և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված որոշումների որ տեսակին են դրանք համապատասխանում:

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնական կայքում առանձնացված է նաև բաժին՝ «կարգապահական վարույթներ» վերտառությամբ՝ «որոշումներ» և «այլ որոշումներ» ենթաբաժիններով,



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որտեղ 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը հրապարակված որոշում չկա:

Ինչպես նշեցինք, կազմակերպության կողմից որոշումների դասակարգման համար հիմք են հանդիսացել դատական իշխանության ինքնակառավարման մարմնի համար միջազգային փաստաթղթերով սահմանված գործառույթները: Այդ գործառույթները համադրվել են ներպետական օրենսդրությամբ ԲԴԽ համար սահմանված գործառույթների հետ, և ըստ այդմ էլ դասակարգվել են ԲԴԽ կողմից կայացված որոշումները:

Ըստ այդ դասակարգման՝ բոլոր այն դեպքերում, երբ ԲԴԽ մեկ որոշման շրջանակներում գործադրվել է սահմանված մի քանի գործառույթ, ապա մեր կողմից այդ որոշումը հաշվարկվել է մի քանի անգամ: Նույն որոշումների քանակը ըստ միջազգային փաստաթղթերով սահմանված գործառույթների տարանջատման կազմում է **196<sup>4</sup>**:

Այսպես.

Գործառույթը	Որոշումների քանակը
դատական խորհրդի կազմավորումը	1
դատավորների ընտրություն և նշանակում	82
դատավորների առաջխաղացում	27
դատավորների գնահատում	1
կարգապահություն և էթիկայի հարցեր	0
թափանցիկություն և հաշվետվողականություն	5
դատական իշխանության բյուջեի կազմում, կատարում և վերահսկողություն	7
դատարանների վարչարարություն և կառավարում	60
դատական իշխանության հեղինակության ապահովում	7
հանրային հաշվետվողականություն և վերահսկողություն	6

<sup>4</sup> քանակական տարբերությունները ԲԴԽ պաշտոնական կայքում հրապարակված որոշումների և մեր կողմից ըստ գործառույթային ոլորտների առանձնացված որոշումների միջև պայմանավորված են նրանով, որ Խորհրդի կողմից հրապարակված մեկ որոշումը որոշ դեպքերում անդրադարձ է կատարել մի քանի գործառույթների:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## **Դատավորների ընտրություն և նշանակում**

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական խորհուրդների կազմավորումը ներառում է դատավոր և ոչ դատավոր անդամների ներգրավման վերաբերյալ հարցեր<sup>5</sup>:

Սույն գործառույթի ներքո դիտարկման են ենթակա հետևյալ հարցերը՝

- Դատավորների ընտրության հիմքում դրվող չափանիշների օբյեկտիվությունն ու հստակությունը,
- Ընտրության համար պատասխանատու մարմինների կարգավիճակն ու գործունեության անկախության երաշխիքները,
- Դատավորների նշանակման գործընթացում պետական այլ մարմինների ներգրավվածության ընդունելի սահմանները,
- Դատավորների նշանակման գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
- Նշանակման որոշումների բողոքարկման հնարավորությունները:

## **Դատավորների առաջխաղացումն ու գնահատումը**

Գործառույթի արդյունավետ իրականացման համար կարևորվում են հետևյալ հարցերը՝

- Գնահատման խնդիրներն ու նպատակները,
- Գնահատումն իրականացնող մարմինները, դրանց անկախությունն ու օբյեկտիվությունը,
- Գնահատման քանակական և որակական մեթոդները:

## **Դատավորների վերապատրաստումները**

Վերապատրաստումների հարցում կարևորվում է այն իրականացնող մարմնի անկախության հարցը, որպիսին կարող են լինել, օրինակ, խորհուրդները կամ ակադեմիաները:

## **Դատավորների կարգապահական պատասխանատվությունը**

Դատավորների կարգապահական պատասխանատվության և վերջիններիս մասնագիտական վարքագծի էթիկայի նորմերի վերաբերյալ ընդհանուր մոտեցումը հանգում է հետևյալին՝ դատավորի կողմից օրենքի մեկնաբանությունները, փաստերի գնահատումն ու ապացույցների կշռադատումը չպետք

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը որպես դատական իշխանության անկախության երաշխիք. «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, զեկույց, 2019





# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Է հանգեցնի քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվության՝ բացի կոպիտ անփութության կամ խախտման դեպքերի:

Դրա համար կարևորվում են՝

- Կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակությունն ու կոնկրետությունը,
- Պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնի անկախությունը,
- Նշանակվող տույժի համաչափությունը կատարված արարքին,
- Նշանակված որոշումը բողոքարկելու արդյունավետ մեխանիզմների առկայությունը:

## Բյուջեի կառավարում և վերահսկողություն

Բյուջեի ձևավորման և կառավարման հարցում կարևոր նախապայմաններից է դատարանների լայն ներգրավվածությունը:

Միևնույն ժամանակ կարևորվում է դատական իշխանության ինքնակառավարման մարմնի իրավասությունը՝ բյուջետային հայտը խորհրդարան ներկայացնելու հարցում:

Ինչ վերաբերում է բյուջեի բաշխմանը, ապա դատական խորհուրդը պետք է լիազորություններ ունենա դատարանների միջև բյուջեի բաշխման հարցի շուրջ:

## Դատարանների կառավարումը

Որպես կանոն դատարանների ղեկավարումը պետք է օժանդակի բարձրացնելու դատավորների աշխատանքի արդյունավետությունը և պահպանի նրանց անկախությունն ու անկողմնակալությունը: Նմանապես, դատարանների կառավարման համար պատասխանատու մարմինները պետք է իրականացնեն բացառապես *կառավարման* գործառույթներ, և ոչ երբեք դատական գործառույթներ: Այդպիսի գործառույթ իրականացնելու համար իրավասությունները պետք է տրվեն անկախ մարմիններին, օրինակ՝ դատական խորհուրդներին:

## Դատավորների հեղինակության պաշտպանությունն ու խթանումը

Դատական խորհուրդները պետք է՝

- լիազորություն ունենա խթանելու դատական իշխանության հեղինակությունը,
- հերքելու լրատվամիջոցների կամ այլ մարմինների կողմից դատավորների շուրջ ստեղծված թյուրընկալումները և



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

• իրազեկելու լայն հանրությանը արդարադատության իրականացման, իրավունքի գերակայության, քաղաքացիական ազատությունների և հանրային շահի պաշտպանության տեսանկյունից դատավորի դերի մասին՝ այդպիսով բարձրացնելով դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը:

Այս նպատակի արդյունավետ իրականացման համար խորհուրդը պետք է մշակի և հրապարակի հանրության և տեղական համայնքների հետ դատական իշխանության հարաբերակցության ռազմավարություն և քաղաքականություն՝ ի ապահովումն դատական իշխանության և դրա գործառույթների նկատմամբ վստահության:

## **Հանրային հաշվետվողականություն և վերահսկողություն**

Դատական խորհուրդը իր պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր է՝

- ապահովել իր գործառույթների իրականացման թափանցիկությունը,
- հասարակությանը և լրատվամիջոցներին տրամադրել բավարար տեղեկություններ,
- պարբերաբար զեկուցել իր գործառույթների իրականացման մասին<sup>6</sup>, որպեսզի ապահովվի արդարադատության իրականացման վերաբերյալ ճիշտ հանրային ընկալում

Թափանցիկության պահանջը չպետք է մեկնաբանել այնպես, որ խորհրդի գործունեությունն ամբողջությամբ հրապարակային դարձվի: Այդուամենայնիվ, հրապարակային նիստեր անցկացնելու պահանջը կնպաստի խորհրդի վստահելիության աճին, ինչը ողջունելի է որպես այդ ինստիտուտի լեգիտիմությունը բարձրացնելուն ուղղված քայլ:

Դատավորների նշանակման և առաջխաղացման գործընթացի թափանցիկությունը հնարավոր է ապահովել նշանակման չափանիշների և պաշտոնի նկարագրությունների հրապարակման միջոցով: Ցանկացած շահագրգիռ կողմ պետք է հնարավորություն ունենա ուսումնասիրել կատարված ընտրությունները և ստուգել, թե դատական խորհուրդը կիրառել է արդյո՞ք կանոններն ու չափանիշները նշանակման և առաջխաղացման բովանդակությանը համապատասխան:

Նմանապես, բյուջետային լիազորություններ ունենալու դեպքում դատական խորհուրդը պետք է հաշվետու լինի բյուջեն հաստատած պառլամենտին ֆինանսների ծախսման վերաբերյալ:

<sup>6</sup> ENCJ, Resolution on Transparency and Access to Justice, 29 May 2009, para. 3.



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## 1. Դատական խորհրդի կազմավորումը

*ՀՀ դատական օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման դեպքերից է նրա հրաժարականը:*

Այս ոլորտում ԲԴԽ-ն կայացրել է 1 որոշում՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Ռուզաննա Հակոբյանի լիազորությունները դադարած համարելու վերաբերյալ՝ նրա հրաժարականի վերաբերյալ դիմումի հիման վրա:

Կարգավորվող ոլորտը	Որոշումների քանակը
ԲԴԽ անդամի լիազորությունները դադարած համարելու վերաբերյալ	1

*Դատական օրենսգրքի 81-րդ հոդվածում սահմանված է ԲԴԽ անդամի պաշտոնը թափուր մնալու դեպքում նոր անդամի ընտրության կարգը: Այսպես՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու օրվանից հետո՝ մեկօրյա ժամկետում (բացառությամբ լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքի, որի համար նախատեսված է այլ ժամկետ) Բարձրագույն դատական խորհրդի նախագահը դիմում է համապատասխանաբար Ընդհանուր ժողով կամ Ազգային ժողով: Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամն ընտրվում է նախատեսված ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:*

Բարձրագույն դատական խորհրդի անդամ Ռուզաննա Հակոբյանի լիազորությունները դադարել են 2018 թվականի սեպտեմբերի 27-ին: «168.am», «armkur.am» ինտերնետային կայքերում տարածված լուրերի համաձայն՝ 2018 թվականի նոյեմբերի 8-ին Բարձրագույն դատական խորհրդի նիստում ԲԴԽ անդամ է ընտրվել դատավոր Նախշուն Տավարացյանը, որից հետո՝ 2018 թվականի նոյեմբերի 12-ին, ընդհանուր ժողովի նիստի ժամանակ, հրաժարական է ներկայացրել: Նախշուն Տավարացյանը քվեարկության արդյունքում հավաքել է 22 ձայն, մինչդեռ մեկ այլ դատավոր՝ Սուրեն Անտոնյանը, ստացել է 72 քվե: Բայց քանի որ օրենքով ԲԴԽ կազմում պետք է պահպանվի նաև գենդերային հավասարություն, ընտրված է համարվել քիչ ձայն ստացած կին դատավորը: «Ժողովուրդ» թերթի հետ զրույցում Նախշուն Տավարացյանը հայտարարել է, որ հրաժարական է տվել, քանի որ համակարգում անառողջ մթնոլորտ է ստեղծվել՝ կապված քվեարկության արդյունքների հետ<sup>7</sup>:

Եթե Նախշուն Տավարացյանը ընտրվել է ԲԴԽ անդամ, որից հետո նոր հրաժարական տվել, անհասկանալի է, թե ինչու այս դեպքում խորհուրդը չունի կայացրած որոշում՝ ԲԴԽ անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ:

<sup>7</sup><https://armkur.am/856489/>  
<https://168.am/2018/11/16/1042302.html>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մեկ այլ աղբյուրի՝ armlur.am լրատվական կայքում հրապարակված լուրերի համաձայն՝ 2018 թվականի դեկտեմբերի 21-ին պետք է տեղի ունենային ԲԴԽ անդամի նոր ընտրություններ<sup>8</sup>: Սակայն մինչև այժմ ԲԴԽ-ն լիակազմ չէ, քանի որ նշանակված չէ Բարձրագույն դատական խորհրդի 10-րդ անդամը:

Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահին, վերջինս ընտրվել է 2018 թվականի մարտի 5-ին կայացած խորհրդի առաջին նիստի ընթացքում՝ գաղտնի քվեարկությամբ:

ԲԴԽ նախագահի ընտրության վերաբերյալ նիստի մասին տեղեկությունն առկա է խորհրդի պաշտոնական կայքում<sup>9</sup>, սակայն որևէ որոշում այդ կապակցությամբ կայքում արտացոլված չէ:

Այժմ ԲԴԽ կազմում պաշտոնավարում են 9 անդամ՝ 8 տղամարդ և 1 կին համամասնությամբ:

## 2. Դատավորների ընտրություն և նշանակում

Սույն ոլորտում 2018 թվականի ընթացքում ԲԴԽ կողմից հրապարակվել է 82 որոշում: Այսպես.

Կարգավորման ենթակա հարցը	Որոշումների քանակը
Գրավոր քննությունների անցկացման վերաբերյալ	6
Հարցազրույցի անցկացման վերաբերյալ	5
Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ	5
Դատավորների թեկնածությունների վերաբերյալ	16
Դատավորների նշանակման վերաբերյալ	22
Դատարանի նախագահի նշանակման վերաբերյալ	13
Դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ	16

### • Գրավոր քննությունների անցկացման վերաբերյալ որոշումներ

<sup>8</sup> <https://armlur.am/864586/>

<sup>9</sup> <http://www.court.am/index.php?link=news/05-3-18/05-03-2018.htm>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատական օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը յուրաքանչյուր տարի ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 15-ը սահմանում և հրապարակում է որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը (որը չի կարող պակաս լինել ընդհանուր միավորների 60 տոկոսից):

Գրավոր քննությունների անցկացման վերաբերյալ ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է որոշումներ, որոնցով

- ձևավորել է որակավորման գրավոր քննությունների ստուգման և գնահատման հանձնաժողովի կազմերը,
- ընտրել է գրավոր քննության հարցեր մշակող մասնագիտացված կազմակերպություն,
- նշանակել է համապատասխան աշխատակից՝ որակավորման քննությունների կազմակերպման աշխատանքներ իրականացնելու համար,
- սահմանել է որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը, որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգը, որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, գնահատման հանձնաժողովի աշխատանքը գաղտնի իրականացնելու անհրաժեշտ մանրամասները, քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը, որակավորման գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը և որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը:

## • Հարցազրույցի անցկացման վերաբերյալ

ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր քննության արդյունքները հրապարակելուց հետո Դատական դեպարտամենտը միասնական համալրված ցուցակը ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդ՝ հարցազրույց անցկացնելու նպատակով:

Նույն օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ հարցազրույցի նպատակն է դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելը: Հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան:

Հոգեբանին ներկայացվող այլ պահանջներ կամ հարցազրույցին նրա մասնակցության կարգն ու չափանիշները Օրենսգիրքը չի սահմանում:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացրել դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կազմակերպման եվ անցկացման կարգը հաստատելու մասին, որով, ի թիվս այլնի, կարգավորել են հարցազրույցի անցկացման համար հոգեբան ընտրելու, նրան տրվող հանձնարարականների, և այլնի վերաբերյալ հարցեր: Այսպես՝ Խորհրդի որոշմամբ Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված հավակնորդների համալրված ցուցակը հրապարակելուց հետո երկշաբաթյա ժամկետում ընտրվում է հոգեբան, որին հանձնարարվում է մշակել հավակնորդների՝ դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական անձնական հատկանիշները բացահայտելուն ուղղված հոգեբանական հարցեր: Դեպարտամենտը հոգեբանին պարզաբանում է հոգեբանական հարցերի բովանդակությունը գաղտնի պահելու, դրանց բարեհաջող պատասխանելու հարցում հավակնորդին որևէ այլ ձևով չաջակցելու, հարցազրույցին անձամբ մասնակցելու և մասնագիտական եզրակացություն տալու անհրաժեշտության մասին: ԲԴԽ-ն կայացրել է մեկ այլ որոշում, որով հարցազրույցի անցկացման համար հոգեբանական հարցեր մշակելու նպատակով հոգեբան է ընտրել Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ավանեսյանին: Սակայն Ինչպես տեսնում ենք, ԲԴԽ-ն չի սահմանել հոգեբանի ընտրության չափանիշները կամ հոգեբանի ընտրության կարգը, մրցույթի հայտարարման ժամկետները և այլ հարցեր: Արդյունքում բաց է մնում այն հարցը, թե ինչ չափորոշիչների հիման վրա և ինչ ընթացակարգով է իրականացվում հարցազրույցի անցկացման համար հոգեբանական հարցեր մշակելու նպատակով հոգեբանի ընտրությունը:

ԲԴԽ որոշումներով սահմանել է նաև հարցազրույցի անցկացման վայրը և ժամանակացույցը, ընտրել զեկուցողներ՝ դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց անձնական գործերը և մասնագիտական փորձը բարձրագույն դատական խորհրդի նիստերում ներկայացնելու համար:

**• Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ**

*Դատական օրենսգրքի 98-րդ հոդվածը սահմանում է, որ դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը որակավորման ստուգման մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ, որին կից, ի թիվս այլնի, ներկայացնում է նաև Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին:*

Բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է որոշումներ, որոնցով սահմանել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացվող հայտի ձևը, դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց որակավորման ստուգմանը մասնակցելու նպատակով ներկայացվող հայտին/դիմումին կից ներկայացվող համաձայնության ձևը, ինչպես նաև հիմնվելով



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վերոնշյալ օրենսդրական դրույթի վրա՝ կայացրել է որոշում, որով սահմանել է, որ հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում Դատական դեպարտամենտը անհրաժեշտության դեպքում գրավոր հարցումներ է ուղարկում հավակնորդի աշխատավայր, բարձրագույն ուսումնական հաստատություններ, ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն, բժշկական հաստատություն, զինվորական մարմին և բարձրագույն որակավորման կոմիտե: ԲԴԽ-ն սահմանել է նաև հարցման նպատակով գրավոր հարցաթերթիկների ձևը:

*ՀՀ Դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակ, որում ընդգրկվում են անհրաժեշտ քանակին հավասար քանակի առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած հավակնորդները:*

Սույն հարցի կարգավորման նպատակով ԲԴԽ-ն կայացրել է համապատասխան որոշում, որով հաստատել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուրի մասնագիտական աշխատանքային գործունեության տեսակը:

Հարկ է նշել, որ Խորհուրդը 2018 թվականի օգոստոսի 23-ին կայացրել է որոշում՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացմամբ բաժինների համալրման մասին, որով հաստատել է դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտ թվաքանակը, համապատասխանաբար՝ քաղաքացիական մասնագիտացմամբ՝ 28, քրեական մասնագիտացմամբ՝ 19, վարչական մասնագիտացմամբ 2 թեկնածու, որին համապատասխան՝ Խորհուրդը 2018 թվականի սեպտեմբերի 7-ին հայտարարություն է տարածել դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին<sup>10</sup>:

Մինչույն ժամանակ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին ԲԴԽ-ն հաստատել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը՝ քաղաքացիական մասնագիտացման՝ 12, քրեական մասնագիտացման՝ 5 և վարչական մասնագիտացման 2 դատավորների թեկնածուների հավակնորդ:

## • *Դատավորների թեկնածությունների վերաբերյալ*

ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ և 116-րդ հոդվածները կարգավորում են Առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր տեղի համար Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելու կարգը, Առաջին ատյանի դատարանի դատավորի

<sup>10</sup> <http://www.court.am/index.php?link=arm/right/candidat-announcement/07-09-2018.htm>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Թափուր տեղի համար առաջարկություն ստացած թեկնածուի կողմից առաջարկությունն ընդունելու կարգը և չընդունելու հետևանքները:

*Այսպես՝ Օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ Առաջին աստիճանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ՝*

- առաջին հերթին՝ այլ դատարանի ռեզերվային դատավորին, որն ունի թափուր տեղին համապատասխան մասնագիտացում,
- երկրորդ հերթին՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանների համապատասխան մասնագիտացման այն դատավորին, որը մինչ այդ գրավոր դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ՝ խնդրելով իրեն տեղափոխել առաջին աստիճանի դատարանի դատավորի պաշտոնին,
- երրորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված նախկին դատավորներին,
- չորրորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին,
- հինգերորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի:

*Օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ Առաջին աստիճանի դատարանի դատավորի թափուր տեղի համար առաջարկություն ստացած թեկնածուն ծանուցումն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում պարտավոր է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել իր գրավոր համաձայնությունը կամ հայտնել անհամաձայնություն նշանակման վերաբերյալ: Այդ ժամկետում համաձայնություն չտալը դիտվում է որպես անհամաձայնություն:*

Փաստորեն, ՀՀ դատական օրենսգրքը նախատեսել է Առաջին աստիճանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղերի համալրման իմպերատիվ կարգ, այն է՝ ներկայացվում է համապատասխան առաջարկություն դատավորի թեկնածուին և թեկնածուի կողմից տրվում է համաձայնություն (անհամաձայնություն) կամ չի տրվում համաձայնություն:

Դատավորների թեկնածուների համաձայնությունը ստանալու նպատակով ԲԴԽ-ն առաջարկություններ է արել Արմեն Հովհաննիսյանին, Դիանա Ղուկեյանին, Ռուբինա Աթոյանին, Գոռ Հարությունյանին, Մարինա Տաշյանին, Աշխեն Ղարսյանին, Հրայրա Մեխակյանին, Գնել Գասպարյանին, Էդգար Կարապետյանին, որոնց վերաբերյալ կայացրել է առանձին որոշումներ:

ԲԴԽ որոշմամբ կարգավորել է դատավորների թափուր տեղերի համալրման հետ կապված ընթացակարգային հարցեր, որտեղ, ի թիվս այլնի, սահմանել է, որ Առաջին աստիճանի տարբեր դատարաններում թափուր տեղերի լրացման գործընթացը պատշաճ ժամկետներում իրականացնելու և դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է հրավիրել տվյալ մասնագիտացման գծով հավակնորդների ցուցակում ընդգրկված





# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

բոլոր թեկնածուներին և առաջարկել կամավորության սկզբունքով կատարել ընտրություն: Նույն տեղի համար մեկից ավելի ցանկություն հայտնողներից կառաջադրվի այն թեկնածուն, ով ունի հանրագումարային ավելի բարձր միավոր: Եթե որևէ թեկնածու առաջարկությունները չի ընդունում, ապա առաջարկություններն արվում են ավելի վաղ առաջացած թափուր տեղի համար՝ Օրենսգրքի 116-րդ հոդվածի կիրառմամբ:

Հարկ է նշել, որ Առաջին ատյանի դատարանի դատավորների թափուր տեղերի համալրման նման կարգ Օրենսգրքով նախատեսված չէ, ուստի ԲԴԽ կողմից նման ընթացակարգի սահմանումը հակասում է Դատական օրենսգրքի տրամաբանությանը և

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով՝ ենթաօրենսդրական նորմատիվ ակտին ներկայացվող պահանջներին:

*Դատական օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին Առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր տեղի համար առաջարկություն ներկայացնելու դեպքում թեկնածուի անհամաձայնությունը հանգեցնում է նրան դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն (բացառությամբ Օրենսգրքով սահմանված դեպքերի):*

ԲԴԽ-ն Աշխեն Ղարալյանին առաջարկություն է ներկայացրել 2 անգամ՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ին և դեկտեմբերի 3-ին: Այնուհետև՝ 2018 թվականի դեկտեմբերի 13-ին, ԲԴԽ-ն կայացրել է որոշում՝ Աշխեն Ղարալյանին դատավորների թեկնածությունների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնից հանելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի թափուր տեղի համար ստացված առաջարկությանն օրենքով սահմանված ժամկետում համաձայնություն չհայտնելը և ղեկավարվելով Դատական օրենսգրքի վերոնշյալ դրույթով:

## • **Դատավորների նշանակման վերաբերյալ**

*ՀՀ Դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թեկնածուի համաձայնության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը նրա թեկնածությունն առաջարկում է Հանրապետության նախագահին՝ ներկայացնելով նաև նրա անձնական գործը, թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա կողմից ներկայացված և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը:*

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը կայացրել է առանձին որոշումներ, որոնցով ՀՀ նախագահին է առաջարկել Դիանա Ղուկեյանի, Ռուբինա Աթոյանի, Հրաչյա Մեխակյանի, Ավագ Գաբրիելյանի, Վարդան Գրիգորյանի, Ռոբերտ Մաթեյանի, Ադրինե Ղուկասյանի, Դանիել Դանիելյանի, Ռուզաննա Ազրոյանի, Մեխակ Գևորգյանի, Գրիգորի Վարդանյանի, Արմիդա Ոսկանյանի, Իվան Բաղմանյանի, Արտակ Թադևոսյանի, Արամ Մկրտչյանի, Մերգեյ Զիչոյանի, Ժաննա Ասատրյանի, Դիաննա Հովհաննիսյանի թեկնածությունները՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում նշանակելու նպատակով:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲԴԽ-ն նաև համապատասխան որոշմամբ ՀՀ նախագահին է առաջարկել ՀՀ սնանկության դատարանի դատավորների թեկնածությունները:

Մեկ այլ որոշմամբ ԲԴԽ-ն ուժը կորցրած է ճանաչել Ռուբինա Աթոյանի թեկնածությունը ՀՀ նախագահին առաջարկելու վերաբերյալ որոշումը:

Հիշեցնենք, որ 2018 թվականի հոկտեմբերի 8-ին ԲԴԽ-ն կայացրել էր ԲԴԽ-41-Ո-112 ընթացիկ որոշումը՝ ՀՀ նախագահին առաջարկել Ռուբինա Աթոյանի թեկնածությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղում նշանակելու համար: Նույն թվականի հոկտեմբերի 25-ին ԲԴԽ-ն, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով<sup>11</sup> և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ ԲԴԽ-43-Ո-122<sup>12</sup> որոշումը և Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի կողմից անցկացված գաղտնի քվեարկության արդյունքները, որոշել է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ԲԴԽ-41-Ո-112 որոշումը: Անհասկանալի է, սակայն, թե ԲԴԽ-43-Ո-122 որոշման որ դրույթներն են հիմք ընդունվել նման որոշում կայացնելիս:

## • **Դատարանի նախագահի նշանակման վերաբերյալ**

*ՀՀ Դատական օրենսգրքի 121-րդ հոդվածը սահմանում է առաջին ատյանի դատարանի նախագահի նշանակման կարգը: Այսպես՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է Դատական ղեկարտամենտի կողմից ներկայացված ցուցակում ընդգրկված դատավորների անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց գրույցի:*

*ԲԴԽ-ն առաջին ատյանի դատարանի նախագահի նշանակման առաջարկություն ներկայացնելու հարցը քննարկելիս հաշվի է առնում դատարանի նախագահի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները բնութագրող հատկանիշները, այդ թվում՝ դատավորի մասնագիտական հեղինակությունը, դատավորի պարտականությունները կատարելիս իր գործընկերների նկատմամբ դրսևորված վերաբերմունքը, դատավորի կազմակերպչական և կառավարչական ունակությունները, կառավարչական բնույթի աշխատանքի փորձառության դեպքում՝ այդ աշխատանքում դատավորի ցուցաբերած հմտություններն ու որակները բնութագրող այլ հատկանիշներ:*

*խորհուրդն անցկացնում է գաղտնի քվեարկություն, որի արդյունքներով Հանրապետության նախագահին է առաջարկվում խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության ձայներն ստացած անձը:*

<sup>11</sup> ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս ընդունում է որոշումներ:

<sup>12</sup> «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 115-րդ, 116-րդ և 127-րդ հոդվածների պահանջների կատարումն ապահովելու վերաբերյալ և Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ն-24 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲԴԽ-ն առանձին որոշմամբ հաստատել է դատարանների նախագահների ցուցակը ներկայացնելու ժամանակացույցը. ԲԴԽ հրապարակած որոշումների համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի նախագահ նշանակելու նպատակով նախագահին են ներկայացվել Սամվել Գրիգորյանի, Արման Կուրեխյանի, Գագիկ Հովհաննիսյանի, Ադասի Դարբինյանի, Ռուբեն Վարդապարյանի, Մուշեղ Հարությունյանի, Հրաչիկ Սարգսյանի, Վարդան Հարությունյանի, Հովհաննես Ավագյանի, Արթուր Սարգսյանի, Գագիկ Սարգսյանի թեկնածությունները:

ԲԴԽ-ն հրապարակել է նաև որոշում ՀՀ Սնանկության դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար Գարիկ Ավագյանի թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ:

## • **Դատավորների լիազորությունների դադարեցման վերաբերյալ**

*Դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը սահմանվում են ՀՀ Դատական օրենսգրքի 159-րդ հոդվածով:*

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդի կողմից դատավորների լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումները կայացվել են.

➤ վերջիններիս վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից՝ առողջական վիճակի գնահատման նպատակով անցկացված բժշկական զննության արդյունքների վերաբերյալ գրություն ստանալու հիմքով (Առաջին ատյանի դատարանի 2 դատավոր),

➤ ՀՀ վերաքննիչ և ընդհանուր իրավասության այլ դատարանի դատավորներ նշանակվելու հիմքով (Առաջին ատյանի դատարանի 10 դատավոր),

➤ հրաժարականի վերաբերյալ դիմումի հիման վրա (Առաջին ատյանի դատարանի՝ 1, Վերաքննիչ դատարանի՝ 1 և Վճռաբեկ դատարանի 1 դատավոր),

➤ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ (Առաջին ատյանի դատարանի՝ 2 և Վերաքննիչ դատարանի 3 դատավոր):

➤ այլ դատարանի դատավոր նշանակվելու կապակցությամբ (վերաքննիչ դատարանի 1 դատավոր)

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանի լիազորությունները դադարեցվել են երկու՝ հունիսի 5-ին և հունիսի 7-ին ներկայացված հրաժարականների հիման վրա՝ *հիմնվելով Օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի կողմից հրաժարական ներկայացվելու դեպքում նրա՝ որպես Վճռաբեկ դատարանի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունները դադարում են*



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Բարձրագույն դատական խորհրդի նիստում իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին չներկայանալու օրվանից:*

Հարկ է նշել նաև, որ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի դեմ 18.03.2019թ. դրությամբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 28 հայցադիմում, որոնցից 23-ը՝ դատավորների նշանակումների վերաբերյալ: Այսպես՝

Վեճի էությունը	Գործերի քանակը
գրավոր քննությունների ստուգման չափորոշիչների, գրավոր քննությունների արդյունքների վերաբերյալ	8
հարցազրույցի փուլը հաղթահարած համարելու վերաբերյալ	3
դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու կամ ցուցակից հանելու վերաբերյալ	2
դատավորին ընդհանուր իրավասության դատարանի դատավորի թափուր պաշտոնում նշանակելու վերաբերյալ	1
Մնանկության դատարանի նախագահի և դատավորների նշանակման վերաբերյալ	2
Առաջին ատյանի դատարանի դատավորի թափուր պաշտոնում դատավորին նշանակելու վերաբերյալ	6
Առաջինադասման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելու վերաբերյալ	1
ԲԴԽ նախագահի ընտրության վերաբերյալ	1
ԲԴԽ նախագահին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ	1
ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու	1



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վերաբերյալ	
Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ	2

### 3. Դատավորների առաջխաղացում

Դատավորների առաջխաղացման հարցերի կարգավորման նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 28-ը հրապարակել է 27 որոշում: Այսպես.

Կարգավորվող հարցը	Որոշումների քանակը
Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների թեկնածությունների և նշանակումների վերաբերյալ	19
Դատարանի և դատարանի պալատների նախագահների նշանակումների վերաբերյալ	7
Դատավորներին պարգևատրելու վերաբերյալ	1

#### **• Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների թեկնածությունների և նշանակումների վերաբերյալ**

*ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման և հաստատման կարգը ներկայացված է Օրենսդրության համապատասխանաբար 124-րդ և 133-րդ հոդվածներում:*

Բարձրագույն դատական խորհրդի որոշումներով սահմանվել են առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով ներկայացվող հայտին կից ներկայացվող դիմումին ներկայացվող պահանջները, կազմվել և հաստատվել է Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները:

*Օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի դատավորների թափուր տեղի համար առաջարկություն ստացած թեկնածուն ծանուցումն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում պարտավոր է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել իր գրավոր համաձայնությունը կամ հայտնել անհամաձայնությունը նշանակման վերաբերյալ: Այդ ժամկետում համաձայնություն չտալը*



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Պիտվում է որպես անհամաձայնություն: Եթե առաջարկությունը ներկայացվել է առաջխաղացման ցուցակում ավելի վաղ ընդգրկված անձին, ապա թեկնածուի անհամաձայնությունը հանգեցնում է նրան դատավորների առաջխաղացման ցուցակից հանելուն, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման հետ կապված արձակուրդում գտնվելու կամ պատգամավոր ընտրված լինելու պատճառներով հրաժարվելու դեպքի:*

ԲԴԽ-ն որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լիլիթ Կատվայանին և Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Սամվել Գրիգորյանին հանել է Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից՝ հիմք ընդունելով վերջիններիս՝ անհամաձայնության մասին դիմումները: Խորհուրդը նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից հանել է Աննա Վարդապետյանին՝ վերջինիս կողմից օրենքով սահմանված ժամկետում համաձայնություն չհայտնելու հիմքով:

Բարձրագույն դատական խորհուրդն իր որոշումներով ՀՀ նախագահին է առաջարկել Նորա Կարապետյանի, Անի Մխիթարյանի, Դավիթ Մերոբյանի, Արսեն Նիկողոսյանի, Տիգրան Միմոնյանի, Նաիրա Մարգարյանի, Արսեն Մկրտչյանի, Արշակ Վարդանյանի, Լուսինե Աբգարյանի, թեկնածությունները՝ Վերաքննիչ դատարանի համապատասխան պալատներում դատավորի թափուր տեղում նշանակելու համար:

Որոշումների համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանի քաղաքացիական պալատում դատավորի թափուր տեղը համալրելու նպատակով ՀՀ նախագահին առաջարկ ներկայացնելու նպատակով առաջարկություն է ներկայացվել Դավիթ Մերոբյանին:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## • **Դատարանի և դատարանի պալատների նախագահների նշանակումների վերաբերյալ**

ՀՀ դատական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի նախագահի նշանակումն իրականացվում է առաջին աստիճանի դատարանի նախագահի նշանակման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով:

Օրենսգրքի 134-րդ հոդվածը սահմանում է Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման կարգը, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է Դատական դեպարտամենտի կողմից ներկայացված ցուցակում ընդգրկված դատավորների անձնական գործերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց գրույցի: Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի նշանակման առաջարկություն ներկայացնելու հարցը քննարկելիս հաշվի է առնում պալատի նախագահի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները բնութագրող հատկանիշներ, որոնք թվարկված են Օրենսգրքի նշված հոդվածում:

Խորհուրդն անցկացնում է գաղտնի քվեարկություն, որի արդյունքներով Հանրապետության նախագահին է առաջարկվում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության «կողմ» ձայներ ստացած թեկնածուն:

Վճռաբեկ դատարանի նախագահի թեկնածու առաջարկելու կարգը նախատեսված է 135-րդ հոդվածով, որը չափանիշների տեսանկյունից, ըստ էության, Վճռաբեկ դատարանի նախագահի համար ներկայացնում է անհրաժեշտ հմտություններն ու որակները բնութագրող նույն հատկանիշներն, ինչ Առաջին աստիճանի կան Վերաքննիչ դատարանների նախագահներին է ներկայացվում:

ԲԴԽ-ն, նախապես սահմանած ժամանակացույցի համաձայն, ղեկավարվելով վերը նշված հոդվածներով՝ կայացրել է որոշումներ, որոնցով ՀՀ նախագահին է առաջարկել Ռուզաննա Հակոբյանի, Երվանդ Խունդկարյանի թեկնածությունները՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահի պաշտոնում նշանակելու համար, Լիլիթ Թադևոսյանի թեկնածությունը՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պաշտոնում նշանակելու համար, Հովսեփ Բեդկյանի թեկնածությունը՝ Վերաքննիչ վարչական դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու նպատակով, Վազգեն Ռշտունու թեկնածությունը՝ Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու նպատակով, Ազգային ժողովին առաջարկել Երվանդ Խունդկարյանի թեկնածությունը՝ Վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնում նշանակելու համար:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## • *Դատավորներին պարգևատրելու վերաբերյալ*

ԲԴԽ-ն համապատասխան որոշմամբ պարգևատրել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Անատոլի Մաթևոսյանին՝ նկատի ունենալով վերջինիս բազմամյա գործունեությունը, արդարադատության կայացման ու զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդը, և ծննդյան կապակցությամբ:

Պետք է նշել սակայն, որ ԲԴԽ որոշման մեջ բացակայում են իրավական հիմքերը, չկա որևէ հղում իրավական ակտերին՝ հասկանալու համար, թե ինչ դրույթով է ղեկավարվում Բարձրագույն դատական խորհուրդը՝ դատավորին պարգևատրելիս:

## 4. **Դատավորների Գնահատում**

*ՀՀ դատական օրենսգրքի 139-րդ հոդվածը սահմանում է դատավորների գործունեության գնահատման կարգը, որի համաձայն՝ դատավորների գործունեության գնահատումն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ Օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա: Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները:*

Գործունեության այս ոլորտում ԲԴԽ կողմից հրապարակվել է 1 որոշում: Այսպես՝

Կարգավորվող հարցը	Որոշումների քանակը
Դատավորների գործունեության առաջին հերթական գնահատման ժամանակացույցը հաստատելու վերաբերյալ	1

Բարձրագույն դատական խորհուրդը հաստատել է դատավորների գործունեության առաջին հերթական գնահատման ժամանակացույցը, որի համաձայն՝ դատավորների գործունեության առաջին հերթական գնահատումն իրականացվելու է 2019 թվականին (2019 և 2020 թվականներին գնահատվելու են ՀՀ մարզերի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները):

2021 թվականին նախատեսվում է Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների գործունեության գնահատում, 2022 թվականին՝ Վարչական և Սնանկության





# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատարանների, իսկ 2023 թվականին՝ Վերաքննիչ դատարանի դատավորների գործունեության գնահատում:

Վճռաբեկ դատարանի դատավորների գործունեությունը, ՀՀ դատական օրենսգրքի համաձայն, ենթակա չէ գնահատման:

## 5. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ և ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐ

*ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցեր քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:*

*94-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները ենթակա են հրապարակման նույն կարգով՝ ապանձնավորած:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհուրդը կարգապահական վարույթի հետ կապված հարցեր քննելիս հանդես է գալիս որպես դատարան՝ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնական կայքում առնձնացված է բաժին՝ «կարգապահական վարույթներ» վերտառությամբ՝ «որոշումներ» և «այլ որոշումներ» ենթաբաժիններով: Այսինքն՝ կարգապահական վարույթների առնչությամբ կայացվող որոշումները առանձնացրվել են ԲԴԽ նորմատիվ, ընթացիկ և աշխատակարգային որոշումներից:

*Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից մեկամսյա ժամկետում:*

Կարգապահական վարույթների վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու նպատակով ուսումնասիրության շրջանակներում տեղեկություններ են ձեռք բերվել նաև գրավոր հարցումների միջոցով<sup>13</sup>:

2018 թվականի հուլիսի 27-ից մինչև դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողով է ստացվել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարցուցելու վերաբերյալ թվով 130 հաղորդում, կարգապահական վարույթ է հարուցվել 14 հաղորդման հիման վրա,

<sup>13</sup> ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությանը 2019 թվականի հունվարի 14-ին ուղարկված գրության համաձայն



# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որոնցից 7-ը կարճվել է, 4-ը՝ գտնվում են քննարկման փուլում, իսկ 3-ով Հանձնաժողովը միջնորդություն է ներկայացրել Բարձրագույն դատական խորհրդին<sup>14</sup>:

Հարկ է նշել, որ 2019 թվականի փետրվարի 8-ի դրությամբ ԲԴԽ պաշտոնական կայքում հրապարակվել է ընդամենը 1 որոշում՝ սեպտեմբերի 10-ին տրված հաղորդման հիման վրա:

## 6. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ և ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ոլորտում ԲԴԽ կողմից կայացվել է 5 որոշում: Այսպես.

Կարգավորվող հարցը	Որոշումների քանակը
ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքին ներկայացվող պահանջների վերաբերյալ	3
Դատական գործի վիճակագրական քարտի վերաբերյալ	1
Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին	1

<sup>14</sup> ԴԴ-Ե-131 14.01.2019թ., ՀՀ դատավորներ ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողով



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## • ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը սահմանելու վերաբերյալ

ՀՀ դատական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը՝ հաշվի առնելով Կառավարության սահմանած պահանջները: Կայքի վարման կարգը, ինչպես նաև կայքում զետեղվող այլ տեղեկատվության ցանկը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

Բարձրագույն դատական խորհուրդը 2018 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ սահմանել է ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը, որի համաձայն՝ առանձնացվել են հետևյալ բաժինները:

Բարձրագույն դատական խորհուրդ, ՀՀ դատարաններ, Դատավորների ընդհանուր ժողով, Դատական դեպարտամենտ, նորություններ, իրավական ակտեր, մշտադիտարկում, վիճակագրություն, գրադարան, միջազգային համագործակցություն, պաշտոնական հայտարարություններ, դատավորների թափուր հաստիքներ, մրցույթներ, առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակների կազմման վերաբերյալ հայտարարություններ, դատական իշխանության ծախսեր, դատական գործեր, էլեկտրոնային փաստաթղթեր, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատավորների հերթապահության ժամանակացույց, ՀՀ դատավորների ամենամյա արձակուրդների տրամադրման ժամանակացույց, հղումներ, ռեյտինգներ, դատավորների անկախության եվրոպական չափորոշիչները, ի գիտություն դատավորների, մեղիա:

Պետք է նշել, սակայն, որ Կայքի մի շարք բաժիններ, այդպես էլ չեն լրացվել 2019 թվականի փետրվարի 8-ի դրությամբ:

### Օրինակ՝

**Բարձրագույն դատական խորհուրդ**- հավելվածի համաձայն՝ սույն բաժնում առկա է ենթաբաժին՝ «խորհրդի աշխատակարգ» վերտառությամբ, որտեղ պետք է լինի տեղեկություն խորհրդի աշխատանքների կազմակերպման մասին, ինչպես նաև «խորհրդի որոշումների նախագծեր» վերտառությամբ ենթաբաժին, որտեղ պետք է նշված լինեն խորհրդի նորմատիվ, ընթացիկ և աշխատակարգային որոշումների նախագծերը, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների նախագծերի: Նշված ենթաբաժիններում որևէ տեղեկություն 2019 թվականի փետրվարի 8-ի դրությամբ ներկայացված չէ: Բացի այդ՝ պարզ չէ, թե ինչ նպատակով են հրապարակվելու ԲԴԽ որոշումների նախագծերը և ինչ ժամանակահատվածում են դրանք պահպանվում կայքում:

**ՀՀ դատարաններ**- այս բաժնի «օգտակար նյութեր» ենթաբաժնի «դատարան դիմելու կարգը», «դատական ծախսեր» և «բողոքարկման կարգ» կետերը, որտեղ Որոշմամբ նախատեսվում է լրացնել տեղեկատվություն դատարան դիմելու կարգի, այդ թվում՝ հայցադիմումի (դիմումի) ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, ընդդատության կանոնների, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների համար, պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ տեղեկատվություն դատական ծախսերի կազմի և դատական ծախսերի բաշխման կարգի վերաբերյալ,



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվություն դատական ակտերի բողոքարկման կարգի, այդ թվում՝ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների, բողոքարկման ենթակա դատական ակտերի, բողոք բերելու իրավասություն ունեցող անձանց շրջանակի, բողոք բերելու ժամկետների, բողոքների համար պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ, նույնպես 2019 թվականի փետրվարի 8-ի դրությամբ լրացված չեն:

**Դատական դեպարտամենտ**- այս բաժնի «կանոնադրություն և կառուցվածք» ենթաբաժինը, որտեղ նախատեսվում է ներկայացնել նաև կառուցվածքի գծապատկերը, նույնպես նույն օրվա դրությամբ լրացված չէ:

## • **Դատական գործի վիճակագրական քարտի վերաբերյալ**

*ՀՀ Դատական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգը, ինչպես նաև, դատական իշխանության գործառույթների արդյունավետ իրականացման կարիքներից ելնելով, կարող է սահմանել դատական վիճակագրության վարման լրացուցիչ վիճակագրական դասակարգիչներ:*

Բարձրագույն դատական խորհուրդը որոշմամբ սահմանել է դատական գործի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող քարտի՝ դատական գործի վիճակագրական քարտի լրացման գործընթացի վերաբերյալ հիմնական դրույթները: Որոշմամբ կարգավորվում են դատական գործերի վերաբերյալ տեղեկությունների լրացման հերթականությունը, ժամկետները, սխալ լրացված տեղեկությունների շտկման կարգը և այլն: Այսպես՝ վիճակագրական քարտով պահանջվող տեղեկություններն իրավասու ծառայողի կողմից լրացվում են տվյալ դատական գործով դատավարական գործողությունն օրենսդրությամբ սահմանված ժամկետում փաստացի կատարվելուց հետո՝ ոչ ուշ, քան երկու օրվա ընթացքում՝ բացառությամբ դատական նիստերի ժամանակի և վայրի, ինչպես նաև դատական ակտերի հրապարակման մասին տեղեկությունների, որոնք լրացվում են իրավասու ծառայողին հայտնի դառնալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը, և հայցի կամ ապացույցների ապահովման մասին տեղեկությունների, որոնք լրացվում են դատարանի համապատասխան որոշումը կատարվելուց հետո՝ ոչ ուշ, քան երկու օրվա ընթացքում:

## • **Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ ԲԴԽ լիազորությունների մեջ է մտնում նաև իր աշխատակարգի սահմանումը:*

Խորհուրդն ընթացիկ որոշմամբ սահմանել է իր աշխատակարգը, որով կարգավորել է նիստերի անցկացման, խորհրդի նիստում խորհրդի անդամների գրանցման, զեկուցմամբ, հարակից զեկուցմամբ



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հանդես գալու, հարցեր տալու և ելույթ ունենալու, հաշվիչ հանձնաժողովի (խորհուրդը յուրաքանչյուր նիստում գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար ընտրում է խորհրդի 3 անդամից կազմված հաշվիչ հանձնաժողով) և քվեարկության արդյունքների արձանագրման վերաբերյալ, խորհրդի որոշումների ընդունման և հրապարակման, դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ցուցակների կազմման և հաստատման, առաջին ատյանի դատարանների դատավորների և դատարանի նախագահների նշանակման, առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակների կազմման և հաստատման, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների, վերաքննիչ դատարանների նախագահների, վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման և վճռաբեկ դատարանի նախագահի ընտրության հարցերի քննարկման կարգի, դատավորների գործունեության գնահատման հարցերի քննարկման կարգի, ազգային ժողովի կողմից ընտրված խորհրդի անդամի, դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցի քննարկման կարգի, խորհրդի անդամին, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման կարգի, խորհրդի անդամի և նախագահի, դատավորի լիազորությունների դադարեցման հարցի քննարկման, խորհրդի անդամի և նախագահի, դատարանների նախագահների և վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, ինչպես նաև դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայության արձանագրման կարգը, դատավորի անկախությունը վտանգող հարցի քննարկման կարգի, խորհրդի և դատարանների բյուջետային հայտը և միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու կարգի, խորհրդի որոշումների նախագծեր կազմելու, դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ իրավասու պետական մարմիններին առաջարկներ, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ ներկայացնելու հարցի քննարկման կարգի, ժամկետների հաշվարկման, խորհրդի նիստերից խորհրդի անդամների բացակայությունների հաշվառման, դատավորին մեկ այլ դատարան գործուղելու հարցի քննարկման կարգի, խորհրդի անդամներին արձակուրդ տրամադրելու կարգի, խորհրդի անդամի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի կազմակերպման կանոնակարգումը, խորհրդի անդամների՝ դեպարտամենտի հետ փոխհարաբերությունների, խորհրդի անդամի վկայականի, հրատապ ծանուցումների, ռեեստրի, խորհրդի փաստաթղթերի հաշվառման և պահպանման, օտարերկրյա պետություններ խորհրդի անդամների գործուղումների, քաղաքացիների ընդունելության, խորհրդում գործավարության կարգի, խորհրդի աշխատանքների լուսաբանման վերաբերյալ հարցեր:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## 7. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՈՒՄ, ԿԱՏԱՐՈՒՄ և ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Սույն ղլորտում ԲԴԽ կողմից կայացվել է 7 որոշում: Այսպես.

Կարգավորվող հարցը	Որոշումների քանակը
ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին	5
ՀՀ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին	1
ՀՀ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին	1

*ՀՀ դատական օրենսգրքի 38-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանների և ԲԴԽ ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից՝ յուրաքանչյուր դատարանի և ԲԴԽ համար առանձին տողով: Դատարանների և ԲԴԽ ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվեն նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը:*

*Ըստ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ ԲԴԽ հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները, կառավարությանն է ներկայացնում իր և դատարանների բյուջետային հայտը պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, հաստատում է իր և դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնում է կառավարության: Բարձրագույն դատական խորհրդին է վերապահված նաև բաշխել դատարանների պահուստային ֆոնդի միջոցները:*

Սկսած 2018 թվականի ապրիլի 9-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը՝ Խորհուրդը կայացրել է ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից գումար հատկացնելու վերաբերյալ 5 որոշում, որոնք մասնավորապես ուղղված են եղել ԲԴԽ անդամ Հայկ Հովհաննիսյանի գործուղման ծախսերի փոխհատուցմանը (307 958 ՀՀ դրամ), դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին իրեղեն ապացույցները տեղափոխելու համար ֆուրգոն տեսակի ավտոմեքենա ձեռք բերելուն (8 400 000 ՀՀ դրամի չափով), Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով



# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին 3 772 300 ՀՀ դրամ գումար հատկացնելուն, մատուցված և մինչև տարեվերջ նախատեսված թարգմանչական ծառայությունների մատուցման դիմաց վճարումներ կատարելու նպատակով Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին 20 000 000 միլիոն ՀՀ դրամ գումար հատկացնելուն, ինչպես նաև ընդհանուր առմամբ 116 607 791 ՀՀ դրամ, որի թվում՝ թվով 55 հատ սկաներներ համակարգիչներ (յուրաքանչյուրը՝ 37800 ՀՀ դրամ), 100 հատ լազերային տպիչներ (յուրաքանչյուրը՝ 99600 ՀՀ դրամ), 22 հատ բազմաֆունկցիոնալ լազերային սարքեր (յուրաքանչյուրը՝ 386484 ՀՀ դրամ), 24 հատ անխափան սնուցման աղբյուրներ (յուրաքանչյուրը՝ 285709 ՀՀ դրամ), 10 հատ ձայնագրաման համակարգեր (յուրաքանչյուրը՝ 2085000 ՀՀ դրամ), 2 հատ համակարգչային սերվերներ (յուրաքանչյուրը՝ 3960000 ՀՀ դրամ), 50 հատ սեղանի համակարգիչներ (յուրաքանչյուրը՝ 446400 ՀՀ դրամ), Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի նստավայրի կոյուղաջրերը հեռացնելու նպատակով 2 կոյուղու պոմպեր (յուրաքանչյուրը՝ 330000 ՀՀ դրամ), ԲԴԽ վարչական և դատական դեպարտամենտի վարչական շենքերում ցուցանակներ (ընդհանուր՝ 554000 ՀՀ դրամ), ծաղկային կոմպոզիցիաներ (700000 ՀՀ դրամ), ինչպես նաև փոստային ծառայություններ ձեռք բերելու նպատակով (ընդհանուր 29 500 000 ՀՀ դրամ):

## 8. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԲԴԽ կողմից սույն ոլորտում կայացվել է 60 որոշում: Այսպես.

Կարգավորվող ոլորտը	Որոշումների քանակը
Դատավորներին կնիքներ, դրոշմակնիքներ տրամադրելու վերաբերյալ	16
Դատավորների գործուղումների վերաբերյալ	4
Դատավորներին արձակուրդ տրամադրելու վերաբերյալ	3
Գործերի բաշխման վերաբերյալ	19
Դատավորին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ	1
Դատավորների հերթապահության վերաբերյալ	1
Դատավորների նստավայրերի վերաբերյալ	5
Դատական դեպարտամենտի կազմի և	8



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գործունեության վերաբերյալ

## **Դատավորներին կնիքներ, դրոշմակնիքներ տրամադրելու վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորին տրամադրվում է դատարանի անվանմամբ դրոշմակնիք: Կնիքի և դրոշմակնիքի նկարագրությունը և տրամադրման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:*

Բարձրագույն դատական խորհուրդը համապատասխան որոշումամբ սահմանել է դատավորին տրամադրվող կնիքի և դրոշմակնիքի նկարագրությունը և տրամադրման կարգը, որտեղ նշվել է, որ նույն որոշումամբ սահմանված կնիքներն ու դրոշմակնիքները տրամադրվում են ՀՀ դատական դեպարտամենտի կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա: Նշված որոշման վրա հիմնվելով՝ ԲԴԽ-ն կնիքներ և դրոշմակնիքներ է տրամադրել Առաջին աստյանի և Վերաքննիչ դատարանի, Սնանկության դատարանի դատավորներին:

### **• Դատավորների գործուղումների վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ որևէ դատարանի բնականոն գործունեությունը չի կարող ապահովվել դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նույն աստյանի համապատասխան մասնագիտացման մեկ այլ դատավոր իր համաձայնությամբ կարող է մինչև մեկ տարի ժամկետով գործուղվել առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան:*

ԲԴԽ որոշումներով Շիրակի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ադրինե Ղուկասյանին գործուղել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան, Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արտակ Թադևոսյանին՝ Արագածոտնի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան, իսկ Լոռու մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տիգրան Գրիգորյանին՝ Գեղարքունիքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան: Այնուհետև Խորհուրդը երկարաձգել է Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արտակ Թադևոսյանի՝ Արագածոտնի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան գործուղելու ժամկետը:





# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## • **Դատավորներին արձակուրդ տրամադրելու վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 58-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ դատավորին արձակուրդ տրամադրելու կարգը սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:*

Բարձրագույն դատական խորհրդի որոշումներով սահմանել է դատավորին արձակուրդ տրամադրելու, արձակուրդից հետ կանչելու, արձակուրդ տրամադրելու հետ կապված վեճերի լուծման կարգը:

Նշենք, որ Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-13-Ո-23 ընթացիկ որոշման հավելվածի (Դատավորին արձակուրդ տրամադրելու կարգի) 2.6 կետի համաձայն՝ դատավորին արձակուրդ տրամադրվում է՝ նախապես սահմանված ժամանակացույցի համաձայն, որը հաստատվում է դատարանի նախագահի կամ նրան փոխարինող անձի կողմից. ժամանակացույցը հրապարակվում է Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնական կայքում: Դատավորն արձակուրդից հետ կարող է կանչվել նույնպես դատարանի նախագահի կողմից բացառիկ դեպքերում՝ դատավորի համաձայնությամբ:

## • **Գործերի բաշխման վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում են, և կոլեգիալ դատական կազմերը ձևավորվում են Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով:*

ԲԴԽ-ն որոշմամբ սահմանել է դատավորների միջև գործերի բաշխման, վերաբաշխման և կոլեգիալ դատական կազմերի ձևավորման համակարգչային ծրագրի շահագործման կարգը: Որոշման համաձայն՝ դատարաններում դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում և կոլեգիալ դատական կազմերը ձևավորվում են Դատական ավտոմատացված համակարգի՝ «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի միջոցով (այսուհետ՝ Ծրագիր):

Որոշմամբ նշվում է, որ Ծրագրի միջոցով կոնկրետ դատական գործերի մշտադիտարկում իրականացնելու իրավասություն ունեցող անձինք որոշվում են Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից:

Միևնույն ժամանակ որոշման մեկ այլ կետով սահմանվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահին և նրա հանձնարարությամբ Բարձրագույն դատական խորհրդի երկու անդամի տրվում է Կարգի համապատասխան կետերում նշված գործողությունների նկատմամբ Ծրագրի միջոցով մշտադիտարկում իրականացնելու հնարավորություն՝ ծրագրային լուծումներն ապահովելուց հետո:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նշենք, որ որոշմամբ չի մանրամասնեցվում, թե ինչ ի նկատի ունի մշտադիտարկում ասելով, կամ ինչպես պետք է այն իրականացվի (ինչ գործողությունների միջոցով): Համակարգչային ծրագրի գործարկման ու սպասարկման մշտադիտարկման կարգ նախատեսված չէ նաև Դատական օրենսգրքով:

Բարձրագույն դատական խորհուրդը սահմանել է նաև դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափերը:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում ստացված գործերը դատավորների միջև բաշխելիս Ծրագիրը հիմք է ընդունում գործերի հավասարաչափ բաշխման հետևյալ չափանիշները՝

- գործերի բաշխման պատահականությունը,
- դատավորների մասնագիտացումը,
- առանձին տեսակի գործերի բաշխման համար օրենքով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելը,
- գործերի բարդությունը,
- մատչելիությունը,
- գաղտնիությունը<sup>15</sup>:

Նույն որոշմամբ սահմանվում է դատավորների միջև գործերի բաշխման կարգը՝ նշելով, որ եթե գործերը հավասարաչափ բաշխել հնարավոր չէ, ապա գործերը բաշխվում են այն հաշվով, որ համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին հանձնված գործերի միջև տարբերությունը չգերազանցի մեկը:

Որոշմամբ նաև սահմանվում է, թե որ դեպքերում դատարան ներկայացված գործերը չեն հաշվարկվում որպես նոր գործ: Այսպես՝ Ծրագիրը նույն դատավորին է հանձնում.

- նույն անձանց միջև և նույն առարկայի մասին վեճի վերաբերյալ ներկայացված հայցադիմումները,
- վերադարձված և կրկին ներկայացված հայցադիմումները (դիմումները)՝ անկախ օրենքով սահմանված ժամկետում կրկին ներկայացվելու հանգամանքից,
- ընդդատության կարգով ուղարկված և ընդդատությամբ կրկին նույն դատարան վերադարձված գործերը,
- հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու մասին որոշումները՝ վերադաս դատական ատյանների կողմից վերացվելու դեպքում:

<sup>15</sup> <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-23-%D5%88-49.pdf>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տվյալ դատավորը գտնվում է արձակուրդում կամ օրենքով նախատեսված հիմքերից մեկի առկայության հետևանքով որոշակի ժամկետով բացակայում է աշխատանքից կամ նրա անուն-ազգանունը ժամանակավորապես հանված է գործերի բաշխման ցանկից կամ լիազորությունները կասեցվել, դադարել կամ դադարեցվել են, ինչի պարագայում գործերը բաշխվում են ընդհանուր կարգով:

Խորհուրդն իր որոշումներով գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանել է Առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Խաչատրյանի, Արմեն Բեկթաշյանի, Ռուբեն Ներսիսյանի, Աննա Դանիբեկյանի, Վարդան Գրիգորյանի, Գագիկ Պողոսյանի, Վերաքննիչ դատարանի դատավորներ Ամրահի Պետրոսյանի, Արթուր Սմբատյանի, Նաիրա Մարգարյանի անուն-ազգանունը՝ աշխատանքային ծանրաբեռնվածության վերաբերյալ դիմումի հիման վրա, ինչպես նաև Վարչական դատարանի դատավոր Մերի Համբարձումյանի անուն-ազգանունը՝ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու վերաբերյալ դիմումի հիման վրա՝ հաշվի առնելով դատավորների վարույթում առանձնակի բարդության գործերի առկայությունը և ողջամիտ ժամկետներում գործերի քննությունն իրականացնելու անհրաժեշտությունը: Նույն հիմնավորմամբ որոշվել է Առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գեղամ Մարգարյանին բաշխվելիք գործերի համար նախատեսել առանձին տոկոսաչափ:

ԲԴԽ-ն սահմանել է նաև ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կողմից ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի քննվող առանձին տեսակի գործերի ցանկը, յուրաքանչյուր դատարանում այդպիսի գործեր քննող դատավորների քանակը և ընտրության կարգը:

**• Դատավորին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած դեպքերում իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորին իր դիմումի հիման վրա տրամադրվում է տվյալ վայրում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում:*

ԲԴԽ կողմից համապատասխան որոշմամբ սահմանվել են իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորին՝ կառավարության կողմից սահմանված կարգով, չափով և ժամկետներում տվյալ վայրում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում տրամադրելու դեպքերը:

Համաձայն որոշման՝ դատավորին բնակարանի վարձի փոխհատուցում տրամադրվում է իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնում նշանակվելու դեպքում: Փոխհատուցումը տրամադրվում է, երբ դատավորի աշխատավայրը գտնվում է իր մշտական բնակության վայրից ավելի քան 30 կմ հեռավորության վրա: Փոխհատուցումը տրամադրվում է դատավորի՝ Խորհրդին ուղղված դիմումի հիման վրա՝ Կառավարության կողմից սահմանված կարգով և չափով:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սակայն տվյալներ, թե իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված քանի դատավորի և բնակարանի վարձին համարժեք որքան գումար է տրամադրվել, ԲԴԽ պաշտոնական կայքում առկա չեն:

## • *Դատավորների հերթապահության վերաբերյալ*

*ՀՀ դատական օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով հաստատում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահությունների ժամանակացույցը:*

*Օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահություն սահմանելու կարգը:*

ԲԴԽ-ն որոշմամբ սահմանել է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահության կարգը՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության 283-րդ և 284-րդ հոդվածերով նախատեսված՝ իրավակարգավորումները և արձանագրելով, որ քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս դատարան ներկայացված համապատասխան միջնորդությունները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ և օրենքով սահմանված սեղմ ժամկետում՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք ներկայացվել են աշխատանքային, թե ոչ աշխատանքային օրերին և ժամերին:

ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում (մարզերի և Երևան քաղաքի) դատավորների հերթապահության ժամանակացույցը՝ ըստ դատավորների, տարվա կտրվածքով տեղադրված է ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում<sup>16</sup>:

## • *Դատավորների նստավայրերի վերաբերյալ*

*ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը համապատասխանաբար Երևան քաղաքի, մարզի կամ մարզերի տարածքն է: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն ունի կենտրոնական և այլ նստավայրեր: Բարձրագույն դատական խորհուրդն ուսումնասիրում է համապատասխան դատարանի նախագահի առաջարկությունը և կայացնում է որոշում դատարանի նստավայրերը և նստավայրի սպասարկման տարածքը սահմանելու մասին:*

<sup>16</sup> <http://www.court.am/index.php?link=arm/right/judgeduty.htm>



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն դատական խորհրդի որոշումներով սահմանվել են ՀՀ առաջին ատյանի դատարանների դատավորների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները փոփոխելու կարգը: Որոշմամբ կարգավորվում է առաջին ատյանի դատավորների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները փոփոխելու վերաբերյալ խորհրդին առաջարկություններ և դիմումներ ներկայացնելու կարգը: Այսպես՝ Առաջին ատյանի դատարաններում նստավայրերի և (կամ) սպասարկման տարածքների, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպքում՝ դատարանի նստավայրերի փոփոխության վերաբերյալ դատարանի նախագահը Խորհրդին ներկայացնում է առաջարկություն, որին կցվում են անհրաժեշտ հիմնավորումներ: Խորհրդին մեկ այլ նստավայր տեղափոխվելու պատճառաբանված դիմում կարող է ներկայացնել նաև Առաջին ատյանի դատարանում նշանակված, մեկ այլ դատարանից տեղափոխված, Խորհրդի որոշմամբ գործուղված դատավորը՝ բացառիկ հիմքերի առկայության դեպքում: Խորհրդին իրավունք ունեն դիմել նաև Առաջին ատյանի դատարանի երկու տարբեր նստավայրերի՝ նույն մասնագիտացում ունեցող դատավորները՝ խնդրելով կատարել իրենց նստավայրերի փոխանակում:

Խորհուրդը որոշմամբ սահմանել է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չսահմանված ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը:

- *Դատական դեպարտամենտի կազմը և գործունեությունը*

*ՀՀ Դատական օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը ձևավորում է իր աշխատակազմը՝ Դատական դեպարտամենտը, որն ապահովում է Բարձրագույն դատական խորհրդի, դատարանների, Ընդհանուր ժողովի և նրա հանձնաժողովների գործունեությունը:*

*«Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է Դատական դեպարտամենտի գործառույթները, որտեղ նշված է, որ Դեպարտամենտն իրականացնում է նաև օրենքով և Դատական դեպարտամենտի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:*

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը որոշմամբ հաստատել է Դատական դեպարտամենտի կանոնադրությունը, որի համաձայն՝ Դատական դեպարտամենտն ապահովում է ԲԴԽ, դատարանների, դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովների գործունեությունը, ինչպես նաև քաղաքացիական, գանձապետական համակարգի, գնումների, ֆինանսատնտեսական և այլ գույքային իրավահարաբերություններին նշված մարմինների մասնակցությունը: Դեպարտամենտն ունի կենտրոնական մարմին, որն ապահովում է ԲԴԽ, Դատավորների ընդհանուր ժողովի և նրա հանձնաժողովների գործունեությունը, և առանձնացված ստորաբաժանումներ, որոնք հանդիսանում են դատարանների աշխատակազմերը և ապահովում են դատարանների գործունեությունը: Պետք է նշել, սակայն, որ Կանոնադրությամբ Դատական դեպարտամենտին տրվել են ավելի լայն լիազորություններ, քան սահմանված է օրենքում:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Բացի այդ, ՀՀ դատական օրենսգրքի 32-րդ հոդվածը սահմանում է առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանի նախագահի լիազորությունները՝ ի լրումն դատավորի լիազորությունների:*

*«Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքի օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի նախագահը վերահսկում է դատարանի աշխատակազմի գործունեությունը:*

Այլ դրույթներ դատարանների նախագահների կարգավիճակի վերաբերյալ սահմանված չեն ո՛չ Դատական օրենսգրքով, ո՛չ «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքով, ո՛չ Դատական դեպարտամենտի կանոնադրությամբ և ոչ էլ ԲԴԽ այլ որոշումներով, ինչի արդյունքում հարց է առաջանում, թե ինչ հարաբերակցության մեջ են գտնվում Դատական դեպարտամենտը, դատարանների աշխատակազմները և դատարանների նախագահները:

ԲԴԽ-ն այլ որոշումներով սահմանել է դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանի տեսակները և ձևերը, դատական կարգադրիչների կրծքանշանի տեսակը և ձևը, դատական ծառայողների և դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը, հաստատել դատական դեպարտամենտում դատական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անձնագրերը, դատական դեպարտամենտում դատական ծառայության, դատական կարգադրիչների ծառայության և քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը:

ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածը նախատեսում է նաև ԲԴԽ լիազորությունը՝ սահմանել դատական ծառայողների և դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը:

*«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Ակադեմիան կազմակերպում է դատական կարգադրիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով:*

ԲԴԽ-ն որոշմամբ սահմանել է դատական ծառայողների և դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը՝ նվազագայունը՝ 12 և առավելագույնը՝ 40 ժամ տևողությամբ»

ԲԴԽ-ն նաև առանձին որոշմամբ Դատական դեպարտամենտի ղեկավորի պաշտոնում է նշանակել Կարեն Փոլադյանին:

## 9. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Այս ոլորտում ԲԴԽ կողմից կայացվել է 8 որոշում: Այսպես.

Կարգավորվող հարցը	Որոշումների քանակը
Դատավորի անկախության վերաբերյալ	1
Խորհրդի խորհրդանիշների վերաբերյալ	1



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի անունից ներկայացուցչություն իրականացնելու վերաբերյալ	6
---	---

## • **Դատավորի անկախության վերաբերյալ**

*ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը քննարկում է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող ցանկացած հարց և իրավասու մարմիններից պահանջում է հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:*

Խորհուրդը որոշմամբ հրապարակել է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող հնարավոր դրսևորումները կանխելու մասին որոշում, որով

➤ անթույլատրելի է համարել դատավորի գործունեությանը որևէ միջամտություն, այդ թվում՝ կոնկրետ գործի քննության առնչությամբ հանրային իշխանության ցանկացած ներկայացուցչի հեռախոսային կամ այլ բնույթի հաղորդակցությունը գործը քննող դատավորի կամ դատարանի նախագահի հետ, ինչպես նաև այդ առնչությամբ հանրային իշխանության հրապարակային հայտարարություն անելը,

➤ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ցանկացած սուբյեկտի կողմից քննության առարկա գործի առնչությամբ դատավորից ընդհուպ տեղեկատվություն ստանալու փորձը միջամտություն է համարել դատավորի գործունեությանը և դատարանի անկախությանը:

➤ վերահստատել է, որ միջամտության փաստի առկայության դեպքում դատավորը պարտավոր է անհապաղ սահմանված կարգով տեղյակ պահել Բարձրագույն դատական խորհրդին:

## • **Խորհրդի խորհրդանիշների վերաբերյալ**

Խորհուրդն իր որոշումներով հաստատել է ԲԴԽ խորհրդանիշի նկարագրությունը և ձևը՝ ղեկավարվելով Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքի՝ Բարձրագույն դատական խորհրդին վերաբերող գլխով և ելնելով Խորհրդին վերապահված լիազորությունների իրագործումն ապահովելու անհրաժեշտությունից:

## • **Խորհրդի անունից ներկայացուցչություն իրականացնելու վերաբերյալ**

Խորհուրդը կայացրել է աշխատակարգային որոշումներ, որոնցով լիազորել է կոնկրետ անձանց՝ դատական ներկայացուցչություն իրականացնելու նպատակով:

ԲԴԽ-ն նաև որոշմամբ խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին գործուղել է Պորտուգալիայի Հանրապետության Լիսաբոն քաղաք՝ մասնակցելու Դատական խորհուրդների եվրոպական միավորման 2018 թվականի «Դրական փոփոխության ուղղորդումը» խորագրով վեհաժողովին:



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## 10. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում ԲԴԽ կողմից կայացվել է 5 որոշում: Այսպես.

Կարգավորվող հարցը	Որոշումների քանակը
ԲԴԽ պաշտոնական կայքի վերաբերյալ	3
ԲԴԽ գործողությունների ծրագրի վերաբերյալ	1
ԲԴԽ կողմից իրավական ակտերի ընդունման ժամանակացույցի վերաբերյալ	1
ԲԴԽ աշխատանքների կազմակերպման նպատակով աշխատանքային խմբերի ձևավորման վերաբերյալ	1

### • ԲԴԽ կողմից իրավական ակտերի ընդունման ժամանակացույցի վերաբերյալ

ԲԴԽ-ն նաև սահմանել է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի ուժով կատարման ենթակա գործողությունների ծրագիրը, Դատական օրենսգրքով նշված լիազորություններով պայմանավորված՝ հաստատել ԲԴԽ կողմից «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված և ընդունման ենթակա իրավական ակտերն ընդունելու ժամանակացույցը:

Պետք է նշել, սակայն, որ ժամակացույցով սահմանված մի շարք իրավական ակտեր այդպես էլ չեն ընդունվել նշված ժամկետներում: Այսպես, օրինակ, *Դատական օրենսգրքի 137-րդ հոդվածի համաձայն՝ դատավորների արտահերթ զնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով և ժամկետներում: ԲԴԽ-ն Ժամանակացույցում սահմանել է դատավորի գործունեության արտահերթ զնահատման կարգը և ժամկետները սահմանելու մասին որոշման ընդունման վերջնաժամկետ՝ նոյեմբերի առաջին տասնօրյակ: Նույն կերպ՝ գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին որոշում՝ հոկտեմբերի առաջին տասնօրյակ, Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները սահմանելու մասին, դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին, դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ լրացուցիչ օգնական և գործավար ներգրավելու դեպքերը և կարգը սահմանելու մասին որոշումներ՝ սեպտեմբերի առաջին տասնօրյակ<sup>17</sup>:*

<sup>17</sup> <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-1-%D5%88-1.pdf>